ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2023թ. հուլիսի 10-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ի.գ.թ., դոցենտ Ա.Ասատրյան):
2. ԵՊՀ իրավաբանական կլինիկայի հաշվետվությունը (զեկ.՝ կլինիկայի տնօրեն, ի.գ.թ., դոցենտ Ք.Վարդանյան):
3. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ի.գ.թ., դոցենտ Ա.Ասատրյան):

Ի.գ.թ., դոցենտ Արտակ Ասատրյանը ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ծավալած ուսումնական և գիտահետազոտական գործունեությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավաբանական կլինիկայի հաշվետվությունը (զեկ.՝ կլինիկայի տնօրեն, ի.գ.թ., դոցենտ Ք.Վարդանյան):

Իրավաբանական կլինիկայի տնօրեն, ի.գ.թ., դոցենտ Քնարիկ Վարդանյանը ներկայացրեց ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակահատվածում կլինիկայի ծավալած գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ի.գ.դ., պրոֆեսոր Գ.Ղազինյանը, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. Ընթացիկ հարցեր

3.1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Դավիթ Թովմասյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Ղազինյանին, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Հովհաննես Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Հովհաննես Հովհաննիսյանի՝ «Օժանդակողը որպես հանցակցի տեսակ» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոցենտ Տիգրան Սիմոնյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Գարիկ Աբելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Գարիկ Աբելյանի՝ «Տուգանք պատժատեսակը. քրեական և քրեակատարողական հիմնախնդիրները» վերտառությամբ, թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Աննա Մարգարյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Սոնա

Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆեսոր Գ.Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Արթուր Վաղարշյանին, ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն».

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

3.5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ռոզա Առաքելյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, դոցենտ Ա.Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆեսոր Վոլոդյա Հովհաննիսյանին, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք».

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ ***Գ. Ղազինյան***

Խորհրդի քարտուղար ***Տ.Սուջյան***

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԲԻՈՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի կողմից կատարված աշխատանքների մասին

1.Գիտահետազոտական աշխատանքներ

Ամբիոնի անդամների կողմից հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 4 գիտական հոդված և 1 բլոգ:

Հոդված

1. **Ասատրյան Արտակ** – 1. Նախընտրական քարոզչության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. իրավագիտություն», 2022 sp1, էջեր 142-156:

   2. Զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման որոշ հարցերի շուրջ, Երևան, «Պետություն և իրավունք» 2023, թիվ 1, էջեր 148-155:

2. **Քնարիկ Վարդանյան , Սերգեյ Ղազինյան** - Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությունը միջազգային իրավունքում և ՀՀ օրենսդրությամբ «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2022 № 2 (37), էջ 84-96:

3. **Անի Սիմոնյան** - “Advantages and Disadvantages of Investor-State Dispute Settlement Through Arbitration”, Բանբեր Երևանի Համալսարանի, 2022 spl. 131-141:

4. **Սերգեյ Ղազինյան** - Կարո՞ղ է արդյոք կրթության իրավունքը սահմանափակվել առողջապահական ճգնաժամերի ժամանակ. Դիտարկումներ Կովկասի վերաբերյալ և պետական արձագանքման պլանավորման հարցը, Բլոգ, International Campus of Human Rights

Տպագրության են ուղարկվել հետևյալ հոդվածները՝

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 90 ամյակին նվիրված անգլերեն լեզվով հրատարակվելիք հոդվածների ժողովածուում տպագրության համար ամբիոնի կողմից ներկայացվել են հետևյալ հոդվածները

Artak Asatryan – The re-opening procedure in the Armenian law and practice following the judgments of the European Court of Human Rights

Ani Simonyan - International patent law conflicts with the right of access to medicines and healthcare: Key aspects

Sergey Ghazinyan - The Link between Human Trafficking and Migration: Identification of Victims

Ամբիոնում պարբերաբար նիստերի ընթացքում ներկայացվում են ամբիոնի անդամների հաղորդումները և գիտական զեկույցները:

Ամբիոնի անդամներից հանդես են եկել մասնագիտական վերլուծություններով տարբեր ռադիո և հեռուստահաղորդումների շրջանակներում (ՀՀՌ, ինտերնետային լրատվական կայքեր, youtube տիրույթ):

Մասնակցություն գիտաժողովներին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը մասնակցել է հեռավար ձևաչափով կազմակերպված գիտաժողովի: Մասնավորապես՝

1. «Սուբսիդիարության սկզբունքը.Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներպետական իրագործումը/կատարումը», մայիս 2023թ. (Երևան, օնլայն քննարկում)

2. Ուսումնական գործունեություն

Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Ուսումնական պլան, ուսումնական ծրագրեր

Ամբիոնի անդամները դասավանդել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում, ինչպես նաև տնտեսագիտության

ֆակուլտետում, ԵՊՀ Եվրոպական հետազոտությունների կենտրոնի մագիստրատուրայում, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում, ՀՀ պետական կառավարման ակադեմիայում:

բ) Դասախոսությունների անցկացման եղանակների կատարելագործում, նոր եղանակների ներդրում.

1.Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակների և մեթոդների վերանայում, դրանց կատարելագործում և նոր մեթոդների ներդրում:

Նոր բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրի ներդրմամբ պայմանավորված վերանայվել են առարկայական ծրագրերի բաղադրիչները և դրանց գնահատման ձևաչափերը:

գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, թեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում.

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից 15-րդ արձանագրության ուժի մեջ մտնելու և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի զարգացմանը զուգահեռ թարմացվել են նաև «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան» և «Կոնֆլիկտները մարդու իրավունքներում» ուսումնական առարկաների ծրագրերը:

բ) Մեթոդական աշխատանք

Ամբիոնի անդամների վերապատրաստման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվել դասավանդման առաջատար մեթոդիկաների ուսումնասիրությանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում քննարկման առարկա են դարձել դասավանդման մեթոդիկայի բարելավումն ու նոր մեթոդների կիրառումը: Արդյունքում ամբիոնը ներդրեց գիտելիքների ստուգման նոր եղանակներ, հատկապես ընթացիկ քննությունների իրականացման գործընթացում: Կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ավելացման արդյունքում մի շարք առարկաների ընթացիկ քննություններն

իրականացվել են հետազոտական աշխատանքների նախապատրաստման և պաշտպանության ձևով:

Նկատի ունենալով, որ կրեդիտային համակարգի պայմաններում կարևորվում է ինքնուրույն աշխատանքի կատարումը, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը որակով և ժամանակին պաշտպանության ներկայացնելու նպատակով ամբիոնն այդ ուղղությամբ ձեռնարկել է որոշակի աշխատանքներ: Հանձնարարվել է դասախոսներին առնվազն ամիսը մեկ անգամ հանդիպել ուսանողների հետ, ճշտել նրանց կողմից կազմված աշխատանքի պլանը, օգնել գրականության ցանկի պատրաստման և ընթացիկ հարցերում:

Ամբիոնը բակալավրիատի երկրորդ կուրսի ուսանողների հետ հանդիպում-քննարկում է ունեցել՝ միջազգային իրավունք մասնագիտացման ընտրության հարցում իրազեկված որոշում կայացնելու նպատակով:

Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք և կադրերի վերապատրաստում

Ամբիոնն ունի *3 առկա* ուսուցմամբ ասպիրանտ /Մեղրյան Արմեն, Բելոյան Ֆիլիանա Առաքելյան Ռոզա /, *1 հեռակա* ուսուցմամբ ասպիրանտ /Աբովյան Արթուր/ և *1* հայցորդ /Սիրանուշ Գրիգորյան/:Պարբերաբար քննարկվում են նրանց աշխատանքի ընթացքը, գիտական հոդվածները երաշխավորվում են տպագրության, այլ աջակցություն է ցուցաբերվում նրանց աշխատանքին: Ամբիոնի ասպիրանտներն ակտիվորեն ներգրավված են նաև ուսումնական պրոցեսում:

Բացի դրանից, ամբիոնում պարբերաբար հաստատվում են այլ բուհերի ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաներ, և ամբիոնի անդամների թվից նշանակվում են նրանց գիտական ղեկավարներ: Ատենախոսությունը ներկայացնելու դեպքում կազմակերպվում է նաև դրանց նախապաշտպանությունը: Բոլորովին վերջերս՝ հունիսի 26-ին կազմակերպվեց

Արցախի համալսարանի հայցորդի ատենախոսության նախապաշտպանությունը: Բավական հետաքրքիր թեմայով շարադրված ատենախոսության բովանդակային քննարկման արդյունքում նախանշվել են հետագա լրամշակման ուղղությունները: Աշխատանքի պատրաստ լինելուն պես արագ կներկայացվի հրապարակային պաշտպանության՝ հաշվի առնելով թեմայի արդիականությունը և Արցախի շուրջ ստեղծված իրավիճակը:

Գիտական նստաշրջանի կազմակերպում և մրցույթներին մասնակցություն.

Ամբիոնը ակտիվ ներգրավվածություն ունի միջազգային դատախաղերի կազմակերպմանը և անցկացմանը, որին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները:

ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համաձայնություն է ձեռք բերվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին նվիրված միջբուհական դատախաղ-մրցույթի կազմակերպչական աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու և ԵՊՀ-ի թիմով հանդես գալու շուրջ:

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրում

Առանձին դասընթացների շրջանակներում ուսումնասիրվում են միջազգային և ներպետական դատական ատյանների պրակտիկ գործեր, ներառյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ և այլն: Միջազգային պրակտիկայի կիրառման վերաբերյալ մի շարք հարցեր ընդգրկված են նաև քննական տոմսերում:

Ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի արդիականացում

Եվրոպական և միջազգային իրավունք մասնագիտացման շրջանակում ընդգրկված դասընթացների մեծ մասը ապահովված է հայալեզու գրականությամբ: Ուսումնական նյութերի կառուցվածքն ու բովանդակությունը արդիականացնելու, դրանց պահանջվածությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ամբիոնը նպատակ է հետապնդում մի շարք

դասընթացների համար պատրաստել ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, մենագրություններ: Ամբիոնի դասախոսներից ներգրավված են առաջիկայում պատրաստվելիք «Փաստաբանությունը ՀՀ-ում» դասագրքի հեղինակային խմբում:

Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստում

Ամբիոնի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են միջազգային և ներպետական գիտաժողովների, քննարկումների, ինչպես նաև ԵՊՀ-ի կողմից սահմանված կարգով մասնակցում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներին:

Ամբիոնի անդամները մասնակցել են մի շարք վերապատրաստումների՝

1. University of Leiden, International Law in Action: the Arbitration of international Dispute (4 week course)2022
2. Իտալիայի Տուշայի համալսարանում ամբիոնի դասախոսներից մասնակցել են «Բուհական անձնակազմերի միջազգային վերապատրաստման շաբաթ»-ին
3. ԵՊՀ շարունակական կրթության վարչութուն «Դասավանդման ժամանակակից գործիքներ» երկամսյա թրեյնիգ 2022թ.
4. «Դրամաշնորհներ գրելու հմտություններ» երկամսյա վերապատրաստում, ԵՊՀ 2022

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրում

Ամբիոնը միջոցներ է ձեռնարկում դասախոսական կազմի համալրման ուղղությամբ: Հիմնական դասընթացների գործնական պարապմունքներն անցկացնում են ամբիոնի նախկին և ներկա ասպիրանտները:

Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում.

- դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով ապահովելու նպատակով թարմացվել և կայքում զետեղվել են առարկայական ծրագրերը, ուսումնական և ուսումնաօժանդակ նյութեր:

Միջազգային կապերի հաստատում և ընդլայնում.

Ամբիոնի դասախոսներից ուսանողների և դասախոսների փոխանակման «Էրազմուս» ծրագրի շրջանակներում Իտալիայի Տուշայի համալսարանում ամբիոնի դասախոսներից մասնակցել են «Բուհական անձնակազմերի միջազգային վերապատրաստման շաբաթ»-ին: Դրա շրջանակներում ձեռք են բերվել ամբիոնի հետ հետագա համագործակցության պայմանավորվածություններ: Իտալիայի մեր գործընկերների փոխադարձ այցելության շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատում կազմակերպվել է կլոր սեղան քննարկում, կրկին վերահաստատվել է փոխադարձ պատրաստակամությունը համագործակցելու ուղղությամբ

Իտալիայի Բոլոնիայի համալսարանից «Էրազմուս+» փոխանակման ծրագրի շրջանակներում ԵՊՀ-ում սովորող ուսանողի համար անգլերեն լեզվով ներկայացվել է փախստականների իրավական կարգավիճակի հետ կապված առարկայական ծրագիրը:

Ամբիոնի վարիչ՝ **Ա.Ասատրյան**

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ
2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավաբանական կլինիկան 2022-2023 ուս. տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ձևավորել է ուսանողական խմբեր՝ *քաղաքացիական/վարչական, քրեաիրավական/ՄԻԵԴ* և *մարդու իրավունքների* մասնագիտացումներով: Կլինիկա են ընդունվել **43 ուսանող**, որոնցից 39-ը բակալավրիատի 4-րդ կուրսի (որից 2-ը՝ հեռակա ուսուցման), իսկ 4-ը մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ են: Տարվա ընթացքում 5 ուսանողներ անձնական հանգամանքներով պայմանավորված դուրս են եկել կլինիկայից: Մնացյալ 38-ը ձևավորել են կլինիկական ուսուցման 4 մասնագիտական խումբ՝ **Քրեաիրավական/ՄԻԵԴ մասնագիտացում՝ 14 ուսանող**, **Քաղաքացիաիրավական/վարչաիրավական մասնագիտացում՝ 17 ուսանող, «Իրավունք բոլորի համար»՝ 4 ուսանող և Մարդու իրավունքների մասնագիտացում՝ 8 ուսանող**: 4 ուսանող համատեղել է մյուս մասնագիտացումները Մարդու իրավունքների մասնագիտացման հետ:

2022-2023 ուս. տարվա կլինիկան հաճախորդների ընդունելությունը և իրավաբանական ծառայությունների մատուցումն սկսել է **2022թ. հոկտեմբերի 11-ից և դադարեցրել 2023թ. մայիսի 5-ին:** Նշված ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկայում անվճար իրավաբանական ծառայություններ են ստացել **159 քաղաքացիներ**, որոնցից **119-ը՝ քաղաքացիաիրավական խնդիրներով, 26-ը՝ վարչական, 10-ը՝ քրեական և 4-ը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող գանգատ կազմելու գործերով**: Վերջինիս հետ կապված ուսանողները կազմել և քաղաքացիներին են հանձնել 2 ՄԻԵԴ գանգատ: ՄԻԵԴ գանգատ կազմելու վերաբերյալ դիմումներից 2-ի ուսումնասիրությամբ պարզվել և քաղաքացիներին ներկայացվել է ՄԻԵԴ դիմելու հիմքերի բացակայությունը, քաղաքացիներին տրամադրվել է իրավախորհրդատվություն: Նախորդ

տարիներին կլինիկայի ուսանողների կողմից պատրաստած մեկ ՄԻԵԴ գանգատ կոմունիկացվել է ՀՀ կառավարության հետ և առաջիկայում սպասվում է հաճախորդին ներկայացվող հարցերի պատասխանների պատրաստում Կլինիկայի կողմից:

Կլինիկայում ընդունված 159 գործերից **100-ը ավարտված է**, մնացյալը ընթացքի մեջ է և փոխանցվելու է հաջորդ տարվա ուսանողներին՝ գործի հետագա ընթացքն ապահովելու համար: Կլինիկան նաև գրանցել է դրական ելքով գործեր, որոնք սկսվել են նախորդ տարիներին և ավարտին հասցվել այս ուսումնական տարվա ընթացքում:

Տրամադրված իրավաբանական ծառայությունները հիմնականում վերաբերել են սեփականության, ժառանգության, ապահովագրության, փոխառության, աշխատանքային և բանկային պայմանագրերի, վարկային պարտավորությունների, խնամակալության, ալիմենտի բռնագանձման, ամուսնալուծության, սնանկության, կենսաթոշակի հաշվարկման, հարկային պարտավորությունների, քրեական վարույթ նախաձեռնելու, քրեական վարույթի ընթացքում իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին և այլ հարակից իրավահարաբերություններին: Ուսանողների կողմից կազմվել են հայցադիմումներ, դիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, ՄԻԵԴ գանգատներ, տրամադրվել են իրավունքի վերաբերյալ պարզաբանումներ:

Մարդու իրավունքների խմբի ուսանողների համար կազմակերպվել է ապաստան հայցողների/փախստականների ծագման երկրի տեղեկատվության վերաբերյալ դասընթացների շարք ***(թվով 21 դասախոսություն)*** ԵՊՀ իրավագիտության և արևելագիտության ֆակուլտետների դասախոսական կազմի կողմից, որոնք վերաբերել են Մերձավոր Արևելքի մի շարք երկրների պետաիրավական կարգին, էթնոկրոնական նկարագրին և այդ երկրներից իրականացվող միգրացիոն շարժերի առանձնահատկություններին:

Մարդու իրավունքների և «Իրավունք բոլորի համար» խմբերի ուսանողների համար անցկացվել են նաև վերապատրաստման դասընթացներ

փախստականների իրավունքների միջազգային և ներպետական պաշտպանության վերաբերյալ:

Այս ուսումնական տարի ևս Կլինիկան հանդես է եկել որպես կառույց, որտեղ պարտադիր պրակտիկա են անցել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 3-րդ կուրսի 160 ուսանող: Պրակտիկայի ստուգարքին մասնակցել է 160 ուսանող, որից 157-ը ստացել է ստուգված, 2 ուսանող առաջին լուծարքին ստացել է ստուգված, 1 ուսանող էլ պետք է մասնակցի օգոստոս ամսին կազմակերպվող 2-րդ լուծարքին:

Կլինիկական կրթություն ստացած ուսանողներին տրամադրվել են ավարտական վկայագրեր:

«ԻՐԱՎՈՒՆՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ

Իրավաբանական կլինիկան այս տարի ևս իրականացրել է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը: Այս տարի ծրագրում ընդգրկված **13 ուսանող** իրականացրել են **30-ից ավել այցելություն** Երևան քաղաքի և մարզերի հանրակրթական տարբեր դպրոցներ, որտեղ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ իրավունքի տարաբնույթ թեմաներով դասախոսություններ են ներկայացրել աշակերտների և դպրոցի աշխատակազմի համար, ինչպես նաև իրազեկել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և իրավաբանական կլինիկայի գործունեության, ընդունելության, կրթական գործընթացների վերաբերյալ՝ նպաստելով ապագա ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը:

Առանձին դեպքերում դպրոցի աշակերտներն իրենք են հյուրընկալվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ և ճանաչողական այցեր են կատարել նաև ԵՊՀ իրավաբանական կլինիկա **(4 այցելություն):**

Դպրոցներում դասավանդման համար ընտրվել են ինչպես տեսական, այնպես էլ առօրյա կիրառական ոլորտի թեմաներ, ինչպիսիք են, օրինակ՝ խոսքի ազատության իրավունքը, երեխաների իրավունքները, ընտանեկան իրավունքը, հանցագործության հասկացությունը և տարրերը, փախստականների իրավունքը, անչափահասների մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունները, մինչդատական քրեական վարույթի սուբյեկտները և այլն:

Այս տարի ևս ԵՊՀ իրավաբանական կլինիկան «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակներում համագործակցել է մի շարք միջազգային և ներպետական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, փախստականների իրավունքի ոլորտում դպրոցականների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով *ՄԱԿ ՓԳՀ-ի և «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի* հետ համատեղ ԵՊՀ իրավաբանական

կլինիկան այս տարի ևս իրականացրել է *«Իրավունք բոլորի համար. Փախստականների իրավունք»* ծրագիրը, որի շրջանակում ԵՊՀ իրավաբանական կլինիկայի **6 ուսանող** այցելել է հանրապետության **8 ավագ դպրոց**, որտեղ թվով **10 սեմինար-քննարկումներ** են անցկացվել փախստականների, ապաստան հայցողների և տեղահանված անձանց իրավունքներին առնչվող հիմնահարցերի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում Կանադայի Կարլթոնի համալսարանի, Իրաքի Կուֆայի համալսարանի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի միջև համագործակցության և *«Անչափահասների իրավունքները և արդարադատությունը»* վերտառությամբ ծրագրի շրջանակներում ԵՊՀ իրավաբանական կլինիկան իրականացրել է *«Իրավունք բոլորի համար. Անչափահասների իրավունք» ծրագիրը,* որի ընթացքում կազմակերպվել է **5 այցելություն** Շիրակի մարզի Գյումրի քաղաքի կրթական հաստատություններ, որտեղ իրականացվել են դասախոսություններ անչափահասների հիմնական իրավունքների և դրանց իրացման հետ առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ:

*Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկայի, իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ և ՈՒԽ ուսանողները կլինիկայի աշխատակազմի համակարգմամբ մասնակցել են ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի և ԵՊՀ Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված «ԵՊՀ օրեր մարզերում» ծրագրին, որի շրջանակում այցելել են **ՀՀ 7 մարզերի 13 դպրոցներ**, որտեղ մարզաբնակ աշակերտներին ծանոթացրել են ֆակուլտետի ու իրավաբանական կլինիկայի գործունեությանը և նպաստել նրանց մասնագիտական կողմնորոշմանը:*

Առանձին ծրագրերից դուրս ԵՊՀ իրավաբանական կլինիկան այցելություններ է կազմակերպել նաև Երևան քաղաքի մի շարք այլ կրթական հաստատություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կլինիկայի ուսանող Սեդա Վաղարշյանը դասախոսություն է ներկայացրել Միասին ՀԿ-ի «Ոսկե սերունդ»

ճամբարի փարեց ճամբարականների համար ՀՀ-ում փարեցների իրավունքների վերաբերյալ, որոնք հատկապես առնչվել են ալիմենտ, կենսաթոշակ, բժշկական օգնություն և սպասարկում ստանալուն:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

Հաշվետու ժամանակաշրջանում կլինիկան շարունակել է համագործակցել իր վաղեմի գործընկերներ՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի, ՀՀ Հանրային պաշտպանի գրասենյակի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի, ՄԱԿ-ի Փախստականների հայաստանյան գրասենյակի, Միգրացիայի միջազգային կազմակերպության, Շվեդիայի Ռաուլ Վալլենբերգի ինստիտուտի և մի շարք այլ միջազգային ու ներպետական պետական ու ոչ պետական կառույցների հետ, ինչի արդյունքում վերջիններիս կողմից ոչ միայն իրավական խնդիրներ ունեցող հաճախորդներ են ուղղորդվել կլինիկա, այլև իրականացվել են համատեղ մի շարք ծրագրեր:

2022-2023 ուս. տարվա սեպտեմբերի 14-ին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրենի օգնականը և ուսանողները մասնակցել են Ռաուլ Վալլենբերգի անվան ինստիտուտի և Հայաստանում Ամերիկյան համալսարանի կողմից կազմակերպված աշխատաժողովին՝ նվիրված իրավաբանական կլինիկական կրթության զարգացման հիմնախնդիրներին և հեռանկարներին:

2022-2023 ուս. տարվա հոկտեմբերի 14-ին ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպության, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի և ԵՊՀ իրավաբանական կլինիկայի կողմից կազմակերպվել է սեմինար-քննարկում *«Փաստաթուղթ չունեցող անձանց պաշտպանությունը»* թեմայով, որին մասնակցել են ԵՊՀ իրավաբանական կլինիկայի և Հյուսիսային համալսարանի իրավաբանական կլինիկայի ուսանողները:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի, ԵՊՀ իրավաբանական կլինիկայի և Հայաստանում Ամերիկյան դեսպանատան

համագործակցության շրջանակներում **2022թ.-ի հոկտեմբեր-2023թ.-ի փետրվար** ընկած ժամանակամիջոցում ԵՊՀ իրավաբանական կլինիկայում իրականացվել է *«Ծագման երկրի տեղեկատվությունը ապաստանի ընթացակարգերում»* խորագրով դասախոսությունների շարք **(21 դասախոսություն),** որոնք վարել են ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրեն Ք. Վարդանյանը, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի պարալեգալ Ա. Ղազարյանը և ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Դասախոսությունների շարքն ընդգրկել է մանրամասն տեղեկատվություն Մերձավոր Արևելքի մի շարք երկրների՝ Իրանի, Թուրքիայի, Աֆղանստանի, Սիրիայի, Իրաքի և Լիբանանի էթնոկրոնական նկարագրի, պետական և իրավական համակարգի առանձնահատկությունների, տեղահանված անձանց միգրացիոն շարժերի, նրանց իրավական վիճակի և ապաստանի ընթացակարգերում ծագման երկրի տեղեկատվության նշանակության վերաբերյալ: Սույն ծրագրին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ուսանողներից բացի, մասնակցել են նաև Հյուսիսային համալսարանի իրավաբանական կլինիկայի ուսանողները, ինչպես նաև ներկայացուցիչներ «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ից: Ծրագրի ավարտին մասնակիցներին և բանախոսներին հանձնվել են վկայագրեր: ԴԱսընթացն անցած ուսանողներից 2-ը ընտրվել են որպես փորձնակ աշխատելու «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ում և հավաքագրելու ՀՀ եկած տեղահանված անձանց ծագման երկրի մասին տեղեկատվությունը շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների համար:

Հաշվետու ժամանակահատվածում *ՄԱԿ ՓԳՀ-ի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի* համագործակցության շրջանակներում **2022-2023 ուս. տարվա նոյեմբերի 11-14-ը** կազմակերպվել է *Փախստականների իրավունքի 11-րդ դպրոցը*: Դպրոցին մասնակցել են հանրապետության մի շարք բուհերի իրավաբանական կլինիկաների ղեկավարներն ու ուսանողները, ձեռք են բերվել

պայմանավորվածություններ կլինիկաների հետագա համագործակցության, այն զարգացնելու և ընդլայնելու վերաբերյալ:

2022-2023 ուս. տարվա հունիսի 1-ին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի և Ռաուլ Վալլենբերգի անվան ինստիտուտի համագործակցության շրջանակներում կազմակերպվել է իրավաբանական կլինիկաների համապետական աշխատաժողով, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ում գործող իրավաբանական կլինիկաների զարգացման հեռանկարները, իրավաբանական կլինիկաների միջև հետագա համագործակցության հնարավորությունները: Աշխատաժողովի ընթացքում ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրենը ներկայացրել է ՀՀ իրավաբանական կլինիկաների քարտեզագրումը, որից հետո բանախոսությամբ հանդես է եկել նաև Վրաստանի Իլյայի պետական համալսարանի Մարդու իրավունքների իրավաբանական կլինիկայի ղեկավար Թամար Գյուրչիանին:

2023-2024 ուս. տարում ԵՊՀ իրավաբանական կլինիկան պատրաստակամ է շարունակել աշխատանքները շահագրգիռ միջազգային և ներպետական կազմակերպությունների հետ՝ ընդլայնելով համագործակցությունը կոնկրետ ոլորտներում կլինիկական մասնագիտացված և թիրախավորված ուղղություններ հիմնելու և դրանք զարգացնելու նպատակով: